



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար քսանվեց թվականի հունվարի իննին

Մի կողմից՝ «ՍԻԳՄԱ» Բաց բաժնետիրական ընկերությունը, հասցե՝ Հայաստան, ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ Փ., 2Ա, ԵՐԵՎԱՆ, 0023, ԵՐԵՎԱՆ, գրանցման համար՝ 278.120.00805, ՀՎՀՀ՝ 00401481, ի դեմս գործադիր մարմնի ղեկավար՝ **ՀՐԱԶՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՎԱՐՂԱՆՅԱՆԻ**, ծնված՝ 21/04/1951թ-ին, ՀԾՀ՝ 3104510032, Նույնականացման քարտ՝ 014316723, տրված՝ 011-ի կողմից, 07/10/2022թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՉԱՔՅԱՆ Փողոց, 2 Շենք, 70Բնակարան, այսուհետ՝ «Վարձատու», և մյուս կողմից՝ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը, հասցե՝ Հայաստան, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 13, ԵՐԵՎԱՆ, 0010, ԵՐԵՎԱՆ, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, ի դեմս գլխավոր քարտուղար՝ **ԱԳՆԵՍԱ ՌԱՅԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ**, ծնված՝ 30/04/1977թ-ին, ՀԾՀ՝ 8004770010, Նույնականացման քարտ՝ 009448887, տրված՝ 011-ի կողմից, 26/07/2018թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ԶԸՐԹ ԶԸՐԹՈՐՅԱՆ Փողոց, 6 Շենք, 44Բնակարան, այսուհետ՝ «Վարձակալ», որի անունից համաձայն 30/12/2025 թվականին տրված լիազորագրի հանդես է գալիս **ՄԱԳՐԱ ՍԱՍՎԵԼԻ ԳԱՄՊԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 21/04/1980թ-ին, ՀԾՀ՝ 7104800557, Նույնականացման քարտ՝ 014242754, տրված՝ 006-ի կողմից, 27/12/2021թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ Թաղամաս, 5/5 Շենք, 4/1Բնակարան, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող **Երևան, Կենտրոն համայնք Ագաթանգեղոսի փողոց 2(երկու)ա շենք հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասը՝ 371.2(երեք հարյուր յոթանասունմեկ ամբողջ երկու) քմ տարածքը՝ ըստ կից նշագծված հատակագծի /այսուհետ՝ Տարածք/:** Հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է վերջինիս անբաժանելի մասը:

Տարածքը հանձնվում է վարձակալին՝ գույքի նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով:

2.2. Վարձակալության հանձնվող տարածքը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից 04/06/2007 թվականին տրված **թիվ 2240498** անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի:

Անշարժ գույքի նկարագիրը՝

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կադաստրային համարը՝ 01-006-309-085
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Օգտագործման նպատակը՝ շենք-շինության սպասարկման համար
Հողամասի չափը(հա)՝ 0.3030
Իրավունքի տեսակը՝ սեփականություն
ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կադաստրային համարը՝ 01-006-309-085-001
Նպատակային նշանակությունը՝ հասարակական
Օգտագործման նպատակը՝ վարչական շենք
Մակերեսը(քառ. մ.) 1713.2
Իրավունքի տեսակը՝ սեփականություն
ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կադաստրային համարը՝ 01-006-309-085-002, օգտագործման նպատակը՝
պահակատուն, Մակերեսը(քառ. մ.)՝ 9.0, Իրավունքի տեսակը՝ սեփականություն
Կադաստրային համարը՝ 01-006-309-085-003 և 008, օգտագործման նպատակը՝
ծածկոց, Մակերեսը(քառ. մ.)՝ 66.9, Իրավունքի տեսակը՝ սեփականություն



Կադաստրային համարը՝ 01-006-309-085-004 և 007, օգտագործման նպատակով արհեստանոց, Մակերեսը(քառ. մ.)՝ 241.2, Իրավունքի տեսակը՝ սեփականություն
Կադաստրային համարը՝ 01-006-309-085-005 և 009, օգտագործման նպատակով օժանդակ, Մակերեսը(քառ. մ.)՝ 142.6, Իրավունքի տեսակը՝ սեփականություն
Կադաստրային համարը՝ 01-006-309-085-006, օգտագործման նպատակով սանհանգույց, Մակերեսը(քառ. մ.)՝ 2.9, Իրավունքի տեսակը՝ սեփականություն
2.3. Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից «26» Դեկտեմբեր 2025թ. տրված թիվ № **ՍՏ-26122025-01-0161, գաղտնաբառ՝ 90J2HC16SAUY** միասնական տեղեկանքի՝ գրանցված սահմանափակումներ չկան:

Համաձայն միասնական տեղեկանքի «**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**» բաժնի՝ Առկա է 26.3քմ մակերեսով ինքնակամ աստիճաններ: Հայտնում ենք, որ գույքը կադաստրային քարտեզում առկա է, սակայն հողամասի գծային չափերը եւ մակերեսը չեն համապատասխանում գրանցված իրավունքին: Կադաստրային ծածկագրերը համապատասխանեցված են գործող կարգին: ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների համաձայն, օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կկատարվի հաշվառող մարմինների կողմից տրված անշարժ գույքի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից: Գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքները կգրանցվեն ՀՀ Կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին համապատասխան հասցե տրամադրելու մասին Երեւանի քաղաքապետի որոշում ներկայացնելու դեպքում: Առկա է ՕՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ: «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-5-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ գույքի օտարման գործարքների դիմաց որոշակի սահմանաչափերը գերազանցող գումարն անկանխիկ չվճարելու դեպքում տվյալ գործարքներն առջինն են:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Պայմանագիրը գործում է **3(երեք)տարի** ժամկետով:

3.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման և պետական գրանցման պահից:

3.3. Տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձանց հիմք չէ պայմանագիրը լուծելու համար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի կնքման պահին տարածքի համար ամսական վարձավճարը սահմանվում է **1.420.000(մեկ միլիոն չորս հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ ներառյալ հարկերը:

4.2. Վարձակալը փոխանցում է վարձավճարը վարձատուի «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2470102798640000 հաշվեհամարին՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10-ը (տասը):

Վարձավճարի հաշվարկը սկսվում է 01/02/2026(մեկը փետրվարի երկու հազար քսանվեց) թվականից:

4.3. Օգտագործված էլեկտրական էներգիայի, ջրի, կոմունալ ծառայությունների, հեռախոսի վարձը և վարձավճարի մեջ չմտնող վարձերը վճարվում են Վարձակալի կողմից:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Վարձատուն իրավունք ունի՝

5.1.1. պահանջել վարձակալից տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխան.

5.1.2. պահանջել վարձակալից լուծել պայմանագիրը և հատուցել վնասները, եթե վարձակալը տարածքն օգտագործել է պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանն անհամապատասխան.

5.1.3. պահանջել վարձակալից վաղաժամկետ մուծել վարձավճարը, եթե վարձակալության վճարի մուծման էական խախտումներ են թույլ տրվել:

5.2. Վարձատուն պարտավոր է՝

5.2.1. տարածքը վարձակալին տրամադրել պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

5.2.2. տարածքը վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ պայմանագրի նոտարական վավերացման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում.

5.2.3. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, վարձակալին գրավոր տեղեկացնել տարածքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ ռաբոտաշինության նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով

ունկած որոշումների հետ:

3. Վարձակալն իրավունք ունի՝

5.3.1. տարածքը ենթավարձակալության հանձնելու կամ օգտագործելու այլ կերպ՝ միայն վարձատուի գրավոր համաձայնության դեպքում:

5.4. Վարձակալը պարտավոր է՝

5.4.1. տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան.

5.4.2. ժամանակին մուծել տարածքն օգտագործելու համար պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված վճարը (վարձավճարը), ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր այլ վճարներ.

5.4.3. պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել իր միջոցների հաշվին.

5.4.4. վարձակալած տարածքի տարածքներում պահպանել սահիտարական և հակահրդեհային կանոնների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալած տարածքի նկատմամբ.

5.4.5. երկամսյա ժամկետում ազատել տարածքը՝ կապված տարածքի (կամ դրա մի մասի) կառուցվածքների (կոնստրուկցիաների) վթարային վիճակի, տարածքը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ.

5.4.6. վարձատուին անմիջապես տեղեկացնել տարածքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) տարածքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև տարածքը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

5.4.7. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված տարածքի սպասվելիք ազատման մասին՝ կապված պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հետ.

5.4.8. տարածքն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7. ՎԱՐՉԱԿԱԼԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

7.1. Վարձակալած տարածքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

7.2. Վարձակալի կողմից կատարված վարձակալած տարածքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

8. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագրից ծագող օգտագործման իրավունքը պետք է պետական գրանցման ներկայացվի ոչ ուշ, քան պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի:

8.2. Պայմանագրի գործողությունը կարող է ցանկացած ժամանակ դադարել կողմերի համաձայնությամբ՝ երկու ամիս առաջ դրա մասին ծանուցելով մյուս կողմին, ինչը ձևակերպվում է համաձայնագրով՝ նոտարական վավերացմամբ:

8.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով՝ նոտարական վավերացմամբ:

8.4. Տարածքի (շենքերի, շինությունների) վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց վարձատուի համաձայնության, եթե՝

8.4.1. այն չի հակասում սահմանված քաղաքաշինական կանոններին (կարգերին).

8.4.2. չի առաջացնում հատուկ թույլտվության անհրաժեշտություն:

8.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՐՎՈՐՄԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԵՐԸ

9.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

9.1.1. տարածքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով.



9.1.2. Էականորեն վատթարացրել է տարածքի վիճակը.

9.1.3. պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամ և ավելի չի մուծել վարձավճարը.

9.2. Վարձակալի պահանջով պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝
9.2.1. վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել տարածքը կամ խոչընդոտներ է ստեղծել տարածքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

9.2.2. վարձակալին հանձնված տարածքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս.

9.2.3. հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, տարածքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

10. ԱՆՀԱՂԹԱՎՈՐՆԵՐԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Վարձատուն երաշխավորում է, որ ինքը ամբողջությամբ և միանշանակ օգտվում է տարածքի սեփականության իրավունքից և որ ինքը կարող է օրինական կերպով տալ տարածքը վարձակալության և վարձակալին տրամադրել այն իրավունքները, որոնք նախատեսված են սույն վարձակալության պայմանագրով:

11.2. Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է կատարել մյուս կողմի խնդրած պատճառաբանված քայլերը տվյալ պայմանագրում նշված կողմերի մտադրությունների իրականացման նպատակով:

11.3. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

11.4. Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.5. Համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կադաստրի կոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակում:

11.6. Մենք՝ Կողմերս, լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առընչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ձեռնտու են: Պայմանագրի բոլոր դրույթները բխում են մեր՝ Կողմերիս իրական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտմամբ:

11.7. Սույն պայմանագիրը կնքված և վավերացված է հայերեն լեզվով, կողմերի ցանկությամբ չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկը պահվում է Նոտարի գործերում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

11.8. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն Նոտարի կողմից վավերացված պայմանագրերի օրինակները ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է Նոտարի մոտ պահվող օրինակին:

11.9. Սույն պայմանագրի վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են վարձակալի և վարձատուի կողմից:

«ՎԱՐՁԱՎՈՐ»

[Handwritten signature]

«ՎԱՐՁԱՎՈՐ»

[Handwritten signature]

...յն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար Սիրվարդ
Գևորգյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը
ստորագրած ֆիզիկական անձանց ինքնությունը պարզված է, նրանց գործունակությունը,
իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորություններն, ինչպես
և անշարժ գույքի պատկանելությունը «ՍԻԳՄԱ» ԲԲԸ-ին՝ ստուգված:

ՀՀ քաղաքացիական օրենքի 135 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող
իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան
սպասարկման գրասենյակում՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:
ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ՝ 161 -ով

Գանձված է պետական տուրք հիևզ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար
ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը 20%՝ համաձայն «Պետական տուրքի
մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Սիրվարդ Հուսիկ Գևորգյան



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ձև 3

Ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ագաթանգեղոսի փող. 2ա


Սարգ, համայնք, հասցե

Վարձակալ

ՀՀ Միասնական Սոցիալական Ծառայություն

ՀՀ Միասնական Սոցիալական Ծառայությանը
վարձակալությամբ տրվող 371.2 քմ տարածք

1. Տարածք
I հարկ
h = 3.96; 2.74; 2.15
D = 0.61



Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:200

Որակավորում ունեցող անձ
Որակավորման վկայականի
համայնք

Կարինե Ղազարյան
0510

Ստորագրություն

Իրավաբանական անձի անվանումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊԻԸ

ՀՎԶԵՏ

02632146